26 նոյեմբեր 2025թ. Թիվ 025-971

# ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 25252659596

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում են ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/14» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 14,099,250 (տասնչորս միլիոն իննսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից մինչև Բենեֆիցիարի կողմից թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/14» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, սակայն ոչ ուշ, քան 29 մայիսի 2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Մալաթիա» մասնաճյուղի կառավարիչ Վահե Մուրադյան

*Կատարող՝*
*Վանուհի Բաղդասարյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 2561)*

Ստորագրող
ՇՈՂԱԿԱԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
5709860310

2025-11-27 10:30:11 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից